ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5105-Ա «_19_» __հոկտեմբերի__ 2026թ.

ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ, ՔԱՆԱՔԵՌԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ.35 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Արտակ Հովհաննիսյանի լ/ա Յուրի Շիրինյանի դիմումը՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Քանաքեռի 4-րդ փողոցի հ.35 հասցեում գտնվող, ըստ օրենքի ժառանգության իրավունքի գրանցման վկայագրերով Արտակ Հովհաննիսյանին և Բելլա Հովհաննիսյանին պատկանող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել, ըստ օրենքի ժառանգության իրավունքի գրանցման 2022 թվականի օգոստոսի 4-ի հ.8915, 2009 թվականի սեպտեմբերի 10-ի հ.5109, 2003 թվականի սեպտեմբերի 29-ի հ.17818 վկայագրերը, Հայկական ՍՈՌ կոմունալ տնտեսության մինիստրության 1954 թվականի սեպտեմբերի 14-ի գույքային թերթը /նոտարական վավերացում 09.12.2022թ./, Երևանի քաղսովետի գործադիր կոմիտեի հաշվետեխնիկական բյուրոյի 1972 թվականի սեպտեմբերի 29-ի գույքային թերթը /նոտարական վավերացում 27.05.2026թ./, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Զեյթուն տարածքային ստորաբաժանման 2009 թվականի մայիսի 26-ի հ.731 գրությունը, «Հայաստանի Ազգային արխիվ» Երևանի քաղաքային մասնաճյուղի 2009 թվականի սեպտեմբերի 9-ի հ.01-20/2010 արխիվային տեղեկանքը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2024 թվականի փետրվարի 12-ի հ.ԳՄ/2185-2024 գրությունը, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված հ.Կ-17112022-01-0162 որոշումը և հ.հ.ԱՏ-05082025-01-0080, ԱՏ-30102023-01-0925, ԱՏ-19072022-01-0542 տեղեկանքները, Արտակ և Բելլա Հովհաննիսյանների համաձայնությունները:

Տեղագրական հանույթից պարզվել է, որ Քանաքեռի 4-րդ փողոցի հ.35 հասցեում գտնվող հողամասի փաստացի մակերեսը կազմում է 367.78քմ:

Քննարկվող հողամասն ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն, ըստ

տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 6-րդ գոտում, հողամասի ծածկագրերն են՝ 01-012-0129-0072, 01-012-0129-0066, 01-012-0129-0068:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն քննարկվող հողամասը գտնվում է բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ, 60-րդ, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2026 թվականի հուլիսի 24-ի հ.Ն/16403-26 եզրակացությունը.

1. Սահմանել, որ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի, Քանաքեռի 4-րդ փողոցի հ.35 հասցեում գտնվող /տնամերձ/ հողամասի սահմանները որոշվում են 367.78քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ 367.78քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը /կատեգորիան/ սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը (օգտագործման նպատակը)՝ բնակելի կառուցապատման:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

4. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների պետերի ու Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ